**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/36 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **25.06.2020թ.**

17.06.2020-25.06.2020թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ շինարարական և այլ պարագաների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/36 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Բեգլարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի պետ, |
| Ա. Գրիգորյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Ն. Ներսեսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի պետի տեղակալ, |
| Է. Խաչատրյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի թունելային կառույցների ուղեմասի պետ, |
| Ջ. Աղամալյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի աշխատանքի նորմավորման մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Բեգլարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ.-ի հունիսի 17-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Հեղույս Մ24*150 Ռ-50 զսպանակավոր տափօղակով և մանեկով | 1500000 |
| 2 | Հիմնահեղույս Մ22*165,մանեկով,զսպանակային և հարթ տափօղակով | 2000000 |
| 3 | Սեղմնահեղույս Մ22*75,մանեկով,զսպանակային տափօղակով և սեղմակով | 2000000 |
| 4 | Ճոճանակային ցցածող ՏՈՒ 14-4-1097-80 | 3000000 |
| 5 | Ռելսեր Ռ 50 տիպի 1-ին կարգի | 69300000 |
| 6 | Ռետինե խողովակ յուղաջերմադիմացկուն բ/ճ 16մմ | 420000 |
| 7 | Պողպատյա թիթեղ սև 245*110*35մմ | 800000 |
| 8 | Ավազ լվացած | 300000 |
| 9 | Նրբատախտակ 1520*1520*5մմ | 186000 |
| 10 | Մալուխ ՎՎԳ 4*6 | 360000 |
| 11 | Տափօղակ M8*20 | 18000 |
| 12 | Հպակային ռելսի հեղույս Մ 20*120,մանեկով,զսպանակային տափօղակով | 1500000 |
| 13 | Պոլիքլորվինիլ ՊՎՔ R-50 միջադիր | 6000000 |
| 14 | Հպակային ռելսի հանգույցի ծավալային միջադիր | 3000000 |
| 15 | Հպակային ռելսի հանգույցի խաչաձև միջադիր | 3000000 |
| 16 | Ավազ գետի | 360000 |

| | | |
|---|---|---|
| 17 | Ավազ լիթոիդային | 450000 |
| 18 | Խիճ բազալտե | 800000 |
| 19 | Խիճ լիթոիդային 10-20 | 480000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «Լանիգերա» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00487223, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Երկաթուղայինների 4-րդ փ. 3/1, Հեռ.՝ 093-089989, էլ. հասցե՝ lanigerallc@gmail.com |
| 2 | ООО «СтройСервис-М» | ՀՎՀՀ՝ 5038068230, գործունեության հասցե՝ 141254, Россия г. Пушкино, улица Кооперативная (Заветы Ильича Мкр.) дом 15-А, Հեռ.՝ +79166841864, +79165184788, էլ. հասցե՝ kiotv@bk.ru |
| 3 | ООО «СТРОЙУНИВЕРСАЛ» | - |
| 4 | «ՏՆՄ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00216627, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Օրբելի 33Ա, բն. 15, Հեռ.՝ 098020304, էլ. հասցե՝ deltant@mail.ru |
| 5 | «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02599869, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արտաշիսյան 94/38, Հեռ.՝ 093030902, էլ. հասցե՝ tadart01@yahoo.com |
| 6 | «Մեծ ծիածան» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00103837, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 91, Հեռ.՝ +37410323324, էլ. հասցե՝ ciacanmarket@gmail.com |
| 7 | «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ | - |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ ООО «СТРОЙУНИВЕРСАЛ» և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի: Վերջիններիս կողմից ներկայացված հայտերում փաստաթղթեր առկա չեն:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի

իրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ մասնակիցների.

1. «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ - Հավելված 1-ով հայտնել է, որ ցանկանում է մասնակցել սույն գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնին, մինչդեռ Հավելված 1.1-ով և Հավելված 2-ով ներկայացրել է 10-րդ չափաբաժնի վերաբերյալ տեղեկատվություն:
2. «ՍտրոյՍերվիս-Մ» ԲԲԸ - Հավելված 1.1-ով 13-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագրում ներկայացված չափսերը չեն համապատասխանում իրավերով պահանջված չափսերին:
3. «Լանիգերա» ՍՊԸ – Հավելված 2-ով 12-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկի հաշվարկը և տառերով և թվերով սխալ է կատարված:
4. «ՏՆՄ» ՍՊԸ – Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկի հաշվարկի ձևաչափը չի համապատասխանում Ընթացակարգի իրավերով պահանջված ձևաչափին և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Հեղույս Մ24*150 Ռ-50 զսպանակավոր տափօղակով և մանեկով | «Լանիգերա» ՍՊԸ | 1,500,000.00 | 1,215,000.00 | 243,000.00 | 1,458,000.00 |
| 2 | Հիմնահեղույս Մ22*165,մանեկով,զսպանակային և հարթ տափօղակով | «Լանիգերա» ՍՊԸ | 2,000,000.00 | 1,570,000.00 | 314,000.00 | 1,884,000.00 |
| 3 | Սեղմնահեղույս Մ22*75,մանեկով,զսպանակային տափօղակով և սեղմակով | «Լանիգերա» ՍՊԸ | 2,000,000.00 | 1,630,000.00 | 326,000.00 | 1,956,000.00 |
| 4 | Ճոճանակային ցցածող ՏՈՒ 14-4-1097-80 | - | 3,000,000.00 | - | - | - |
| 5 | Ռելսեր Ռ 50 տիպի 1-ին կարգի | - | 69,300,000.00 | - | - | - |
| 6 | Ռետինե խողովակ յուղաջերմադիմացկուն բ/ճ 16մմ | - | 420,000.00 | - | - | - |
| 7 | Պողպատյա թիթեղ սև 245*110*35մմ | - | 800,000.00 | - | - | - |
| 8 | Ավազ լվացած | - | 300,000.00 | - | - | - |
| 9 | Նրբատախտակ 1520*1520*5մմ | - | 186,000.00 | | | |
| 10 | Մալուխ ՎՎԳ 4*6 | «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ | 360,000.00 | 353,300.00 | 70,660.00 | 423,960.00 |
| 11 | Տափօղակ M8*20 | - | 18,000.00 | - | - | - |
| 12 | Հպակային ռելսի հեղույս Մ 20*120,մանեկով,զսպանակային տափօղակով | «Լանիգերա» ՍՊԸ | 1,500,000.00 | 1,100,000.00 | 230,000.00 | 1,380,000.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | Պոլիքլորվինիլ ՊՎՔ R-50 միջադիր | ООО «СтройСервис-М» | 6,000,000.00 | 5,990,000.00 | - | 5,990,000.00 |
| 14 | Հպակային ռելսի հանգույցի ծավալային միջադիր | - | 3,000,000.00 | - | - | - |
| 15 | Հպակային ռելսի հանգույցի խաչաձև միջադիր | - | 3,000,000.00 | - | - | - |
| 16 | Ավազ գետի | - | 360,000.00 | - | - | - |
| 17 | Ավազ լիթոիդային | - | 450,000.00 | - | - | - |
| 18 | Խիճ բազալտե | «Մեծ ծիածան» ՍՊԸ | 800,000.00 | 1,066,666.67 | 213,333.33 | 1,280,000.00 |
| 19 | Խիճ լիթոիդային 10-20 | - | 480,000.00 | - | - | - |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը,

2. 5-րդ, 7-9-րդ, 11-րդ, 14-17-րդ, 19-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:

3. ООО «СТРОЙУНИВЕРСАЛ», «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի, «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

4. «Լանիգերա» ՍՊԸ-ի հայտը 12-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

5. 4-րդ, 6-րդ, 12-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

6. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ին, «ՍտրոյՍերվիս-Մ» ԲԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

2. «ՍտրոյՍերվիս-Մ» ԲԲԸ-ի կողմից ներկայացվել է հիմնավորում, համաձայն որի վերջինիս կողմից Հավելված 1.1-ով ներկայացված տեխնիկական բնութագիրը շտկման ենթակա չէ:

3. Պատասխանատու ստորաբաժանման կողմից 13-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում առկա են վրիպակներ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով

ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ 13-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1, 2, 3 | «Լանիգերա» ՍՊԸ | բավարար |
| 12 | «Լանիգերա» ՍՊԸ | անբավարար |
| 13 | ООО «СтройСервис-М» | բավարար |
| - | ООО «СТРОЙУНИВЕРСАЛ» | անբավարար |
| 1-4, 6, 12 | «ՏՆՄ» ՍՊԸ | անբավարար |
| 10 | «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ | բավարար |
| 18 | «Մեծ ծիածան» ՍՊԸ | բավարար |
| - | «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Քանի որ 10-րդ և 18-րդ չափաբաժիններին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում էին գնման հայտով սահմանված գները, հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ տվյալ չափաբաժինների մասով բավարար գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

2. 10-րդ չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 25.06.2020թ. ժամը 10:30-ն, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 13-րդ հարկում, 18-րդ չափաբաժնի մասով՝ 30.06.2020թ. ժամը 11:00-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 13-րդ հարկում:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. 25.06.2020թ. 10-րդ չափաբաժնի մասով չկայացան գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները: Բանակցություններին մասնակիցներից ոչ ոք չէր ներկայացել և բանակցությունների վերջնաժամկետին նոր գնային առաջարկ չներկայացվեց:

2. 18-րդ չափաբաժնի մասով բանակցության հրավիրված մասնակցի կողմից 25.06.2020թ. ներկայացվել է գրություն, համաձայն որի վերջինս հայտնում է, որ սույն

գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկը փոփոխման ենթակա չէ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. 10-րդ և 18-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

2. իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 1 | «Լանիգերա» ՍՊԸ | X | 1,215,000.00 |
| 2 | 1 | «Լանիգերա» ՍՊԸ | X | 1,570,000.00 |
| 3 | 1 | «Լանիգերա» ՍՊԸ | X | 1,630,000.00 |

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:
2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ պայմանագիրը ստորագրելու օրվան հաջորդող կամ Ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի՝** | | |
| **Նախագահ** | | Ա. Բեգլարյան |
| **Անդամներ** | | Ա. Գրիգորյան |
| | | Ն. Ներսեսյան |
| | | Է. Խաչատրյան |
| | | Ջ. Աղամալյան |
| **Քարտուղար** | | Մ. Ղազարյան |